

**Ազդեցության գործոն ունեցող պարբերականներում հոդվածների տպագրության
խրախուսման պայմաններ**

1. Գիտական հետազոտությունների ոլորտում ազդեցության գործոն (impact factor) (այսուհետ՝ ազդեցության գործոն) ունեցող պարբերականներում հոդվածներ տպագրելու դեպքերում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) աշխատողների նկատմամբ սույն կարգի պահանջների բավարարման դեպքերում նախատեսվում է խրախուսանք խրախուսական վճարի տեսքով:

2. Ազդեցության գործոնը որոշելու համար հիմք է ընդունվում «Institute for Scientific Information-ի» (ISI JCR) տվյալները:

3. Խրախուսական վճարի տրամադրման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$\text{Խրախուսական վճար} = \mathbf{Գ(աշխ)} \times \mathbf{Գ(հեղ)} \times \sqrt{\frac{\mathbf{ԱԳ}}{\mathbf{ԱԳ}_{\text{միջ.}}}} \times \mathbf{Գ(հոդվ)} \times \mathbf{X},$$

որտեղ՝

- 1) $\mathbf{Գ(աշխ)}$ -ն գիտական աշխատանքի կատարման վայրն է (տես 6-րդ կետի 1-3-րդ ենթակետերը),
- 2) $\mathbf{Գ(հեղ)}$ -ն հոդվածում տպագրված հեղինակների քանակից կախված գործակից է (տես 6-րդ կետի 4-րդ ենթակետը),

3) ԱԳ-ն պարբերականի ընթացիկ ազդեցության գործոնն է՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

4) ԱԳ_{միջ.}-ն տվյալ պարբերականը ընդգրկող բաժնի (Subject Categories, ըստ Simago Journal and Country Rank-ի, տես <http://www.scimagojr.com/journalrank.php>) միջին ազդեցության գործակիցն է, որ հաշվարկվում է որպես տվյալ պարբերականն ընդգրկող բաժնի կամ բաժինների մեջ ընդգրկված բոլոր պարբերականների ազդեցության գործակիցների թվաբանական միջին,

5) $\mathbf{Գ(հոդվ)}$ -ն տպագրված հոդվածի տեսակն է՝ բուն հետազոտություն կամ «գրականության ակնարկ» (տես 6-րդ կետի 5-րդ ենթակետը):

4. Խրախուսական վճարի հաշվարկման համար հաշվի է առնվում տվյալ հոդվածի ազդեցության գործոնը և ամսագրի միջին ազդեցության գործոնը:

5. Յուրաքանչյուր տպագրված հոդվածի համար որպես բազային գործակից սահմանվում է 1 միավորը:

6. Խրախուսական վճարները հաշվարկելիս կիրառվում են հետևյալ պահանջները՝

1) ամբողջությամբ Հիմնադրամում կատարված գիտական աշխատանքների արդյունքում տպագրված հոդվածի համար խրախուսման գործակից սահմանվում է 1.5 միավորը.

2) միջազգային համագործակցության արդյունքում կատարված համատեղ աշխատանքների արդյունքում տպագրված հոդվածի համար խրախուսման գործակից սահմանվում է 1.3 միավորը.

3) հիմնադրամի և Հայաստանի Հանրապետություն գործող այլ գիտական հաստատության հետ համատեղ կատարված համատեղ աշխատանքների արդյունքում տպագրված հոդվածի համար խրախուսման գործակից սահմանվում է 1 միավորը.

4) աշխատանքը կատարած հեղինակների թվից ելնելով՝ որպես խրախուսման գործակից սահմանվում են հետևյալ միավորները.

ա.1-5 հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 1,

բ.6-10 հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 0.75,

գ.11-15 հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 0.5,

դ. 15-20 հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 0.25,

ե. 20-1000 հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 0.1,

զ. 1001 ավելի հեղինակ ունեցող հոդվածների համար՝ 0.05

5) բուն հետազոտական հոդվածների համար խրախուսման գործակից սահմանվում է 1 միավորը, իսկ «գրականության ակնարկ» հոդվածների համար՝ 0.75 միավորը,

6) մինչև 1 ազդեցության գործոն ունեցող պարբերականում տպագրված հոդվածի համար սահմանվում է $X=100.000$ դրամ, որից հետո ազդեցության գործոնի յուրաքանչյուր 0.1 միավորի համար սահմանվում է 10.000 դրամ խրախուսական վճար,

7) առաջին և վերջին հեղինակներին տրամադրվում է հոդվածի համար սահմանված խրախուսական վճարի 70%, իսկ մնացած հեղինակներին՝ 30%:

7. Խրախուսական վճարը տրվում է Հիմնադրամի այն աշխատողին, ով հողվածը տպագրելիս որպես աշխատանքի վայր առաջինը նշել է հիմնադրամը:

8. Սույն կարգը տարածվում 2017թ. հուլիսի 1-ից հետո ծագած և սույն կարգի պահանջները բավարարող հողվածների վրա:

9. Խրախուսավճարը ստանալու համար հայտատուն պետք է ներկայացնի համապատասխան դիմում հայտ/տես հավելվածը/ և ստորագրված համաձայնություն հողվածի մնացած բոլոր հեղինակների կողմից և բավարարի «Ազդեցության գործոն ունեցող պարբերականներում հողվածների տպագրության խրախուսման կարգ»-ի պահանջներին: